

## ՀԱԳՄՉ 09.10

Երկրորդ հրատարակություն  
1 հունվարի 2003թ.  
Ներառում է 1-ին և 2-րդ փոփոխությունները

---

## Մաքրման պահանջներ

---

---

Տնօրեն,  
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ),  
2 United Nations Plaza, DC2-0650  
New York, NY 10017  
USA

Էլ. Փոստ՝ [mineaction@un.org](mailto:mineaction@un.org)  
Հեռախոս՝ (1 212) 963 1875  
Ֆաքս՝ (1 212) 963 2498  
Կայքէջ՝ [www.mineactionstandards.org](http://www.mineactionstandards.org)

## Նախագգուշացում

Սույն փաստաթուղթն ուժի մեջ է մտել կազմի վրա նշված ամսաթվից: Քանի որ Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչները (ՀԱԳՄՉ) պարբերաբար վերանայվում և թարմացվում են, դրանից օգտվողները պետք է այցելեն ՀԱԳՄՉ ծրագրի կայքէջը վերջինիս կարգավիճակը ստուգելու նպատակով (<http://www.mineactionstandards.org/> կամ ՄԱԿԱՄ կայքէջ հետևյալ հասցեով՝ <http://www.mineaction.org>)

## Հեղինակային իրավունք

ՄԱԿ-ի սույն փաստաթուղթը Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչ է (ՀԱԳՄՉ) և սեփականության իրավունքով պաշտպանված է ՄԱԿ-ի կողմից: Ոչ սույն փաստաթուղթը, ոչ էլ դրա որևէ հատված չի կարելի վերարտադրել, պահել կամ որևէ այլ միջոցով, կամ ձևով փոխանցել որևէ այլ նպատակի համար՝ առանց ՄԱԿ-ի անունից գործող ՄԱԿԱՄ-ի կողմից նախապես գրավոր համաձայնություն ձեռք բերելու:

Սույն փաստաթուղթը ենթակա չէ վաճառքի:

Տնօրեն  
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱՄ)  
2 United Nations Plaza, DC2-0650  
Նյու Յորք, NY 10017  
ԱՄՆ

Էլ-փոստ՝ mineaction@un.org  
Հեռախոս՝ (1 212) 963 1875  
Ֆաքս՝ (1 212) 963 2498

---

## Բովանդակություն

Բովանդակություն .....	iv
Նախաբան .....	v
Մաքրման պահանջներ.....	1
1. Ծավալ.....	1
2. Փաստաթղթեր .....	1
3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ .....	1
4. Մաքրման հատկորոշում .....	2
5. Պարտավորություններ .....	4
5.1. Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ) .....	4
5.2. Ականազերծող կազմակերպություններ .....	4
5.3. Վերահսկող մարմին.....	5
5.4. Ստուգող մարմին.....	5
Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր.....	6
Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հապավումներ .....	7
Փոփոխությունների գրանցում .....	9

## Նախաբան

Մարդասիրական հակաականային ծրագրերի միջազգային չափորոշիչները առաջին անգամ առաջարկվել են 1996թ. հուլիսին Դանիայում տեղի ունեցած միջազգային տեխնիկական գիտաժողովի աշխատանքային խմբերի կողմից: Չափորոշիչներ են սահմանվել ականազերծման բոլոր ասպեկտների համար, չափանիշեր են առաջարկվել և համաշխարհային նոր սահմանում է տրվել «ականազերծում» գաղափարին: 1996թ վերջում Դանիայում առաջարկված սկզբունքները զարգացվել են ՄԱԿ-ի կողմից անցկացվող ժողովի աշխատանքային խմբի կողմից և մշակվել են Մարդասիրական ականազերծման գործողությունների միջազգային չափանիշերը: Առաջին հրատարակությունը տպագրվել է ՄԱԿ-ի ականազերծման ծառայության (ՄԱԿԱԾ) կողմից 1997թ. մարտին:

Այս նախնական չափորոշիչների ծավալները այդ ժամանակից ի վեր ընդլայնվել են՝ ներառելու հակաականային գործողությունների այլ բաղադրիչներ և արտացոլելու գործողությունների, գործընթացների, գործելաձևերի և նորմերի հետ կապված փոփոխությունները: Չափորոշիչները վերամշակվեցին և վերանվանվեցին որպես Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչներ (ՀԱԳՄՉ), որի առաջին հրատարակությունը լույս տեսավ 2001թ. հոկտեմբերին:

ՄԱԿ-ն ընդհանուր պարտավորություններ ունի ականային ծրագրերի արդյունավետ կառավարումը խրախուսելու և կյանքի կոչելու համար, որը ներառում է չափորոշիչների մշակումն ու պահպանումը: Այդ պատճառով ՄԱԿԱԾ-ը ՄԱԿ-ում տեղակայված այն գրասենյակն է, որը պատասխանատու է ՀԱԳՄՉ-ի մշակման և պահպանման համար: ՀԱԳՄՉ ստեղծվում է Ժնևի Մարդասիրական ականազերծման միջազգային կենտրոնի աջակցությամբ:

ՀԱԳՄՉ-ն պատրաստելու, վերանայելու և վերափոխելու աշխատանքը իրականացվում է տեխնիկական հանձնաժողովների կողմից միջազգային, կառավարական և հասարակական կազմակերպությունների օժանդակությամբ: Յուրաքանչյուր չափորոշիչի ամենավերջին տարբերակը, տեխնիկական հանձնաժողովների կատարած աշխատանքի հետ միասին կարելի է գտնել <http://www.mineactionstandards.org> կայքում: Առանձին ՀԱԳՄՉ-ները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ արտացոլելու հակաականային գործողության զարգացող նորմերն ու պրակտիկան և միջազգային կանոնակարգերի և պահանջների շարքում ներառելու կատարվող փոփոխությունները:

## Ներածություն

Մարդասիրական ականագերծման գործողությունների նպատակն է որոշակի տեղամասում և որոշակի խորության վրա հայտնաբերել և հեռացնել կամ վերացնել բոլոր ականները և պատերազմի պայթուցիկ մնացորդները (ՊՊՄ): Սույն չափորոշիչի նպատակն է խթանել այնպիսի մի վարքագիծ, որի դեպքում ականագերծող հանրությունը ձգտում է հասնել այս նպատակին՝ մշակելով և կիրառելով կառավարման պատշաճ ընթացակարգեր, ձեռք բերելով և շարունակաբար բարելավելով կառավարիչների և ականագերծողների ունակությունները և արտադրելով ապահով ու արդյունավետ սարքավորումներ:

Մարդասիրական ականագերծման ծրագրերի շահառուները պետք է վստահ լինեն, որ ականագերծված տարածքն ապահով է օգտագործման համար: Սա պահանջում է որակի բարձրագույն մակարդակ ապահովող կառավարման համակարգեր և գործառնական ընթացակարգեր:

ՀԱԳՄՉ 09.10 սահմանում է վնասագերծման որակը՝ կիրառելով երկփուլ մոտեցում: Փուլ 1 – Որակի Ապահովումը (ՈԱ) ներառում է համակարգերի և գործառնական ընթացակարգերի ստեղծումը և վերահսկումը մաքրման գործընթացից առաջ և նրա ընթացքում: Փուլ 2 - Որակի Վերահսկումը (ՈՎ) ներառում է մաքրված տարածքի հետազոտման գործընթացը: Մաքրված տարածքի հետազոտումը լրացնում է ՈԱ և լրացուցիչ վստահություն է ստեղծում մաքրման պահանջների բավարարման նկատմամբ: Իրականացման դեպքում հետազոտությունները հանդիսանում են ընդհանուր վնասագերծման գործընթացի կարևոր մասը:

Հետազոտությունների և նմուշների փորձարկման ընդհանուր սկզբունքները և ընթացակարգերը մշակվել են Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ISO) կողմից, և այս հաստատված սկզբունքները և ընթացակարգերը հրատարակվել են ISO 2859-ում: ISO հետազոտության և նմուշների փորձարկման ընթացակարգերը ներկայացնում են այնպիսի կանոններ, որոնք թույլ են տալիս որոշումներ կայացնել արդյունքի որակի վերաբերյալ: Տվյալ ականագերծման գործողությունների դեպքում ‘արդյունք’ է հանդիսանում վնասագերծված հողատարածքը:

Նմուշների փորձարկման արդյունքների վրա մեծապես ազդում են նմուշների ընտրության եղանակները: Հետևաբար պահանջվում են նմուշների փորձարկման հստակ ընթացակարգեր: Եթե ընթացակարգերը չեն սահմանվում և չեն հետևվում, հետազոտությունների վրա կարող են ազդեցություն ունենալ անհատական կարծիքները և հակումները, որոնք կվստթարացնեն արդյունքները, իսկ ականագերծման դեպքում կնվազեցնեն հողի՝ իր նպատակային օգտագործման համար անվտանգ լինելու մեջ վստահելիության մակարդակը:

Սույն Ուղենիշը ներկայացնում է վնասագերծված տարածքի հետազոտման մեկ մեթոդ, որն է պատահական ընտրանքների դիտարկումը: Հնարավոր են նաև այլ մեթոդներ, որոնք կարող են մշակվել ազգային և տեղական կարիքները և գերակայությունները սահմանելու նպատակով: Մակայն հետազոտման այլ ռեժիմներ մշակող և կիրառող Ականագերծման գործողությունների ազգային մարմինները (ԱԳԱՄ), դոնոր կազմակերպությունները և այլ մարմինները պետք է ապահովեն, որ այդ մեթոդները վիճակագրության տեսանկյունից լինեն գործուն և կարողանան շարունակական կերպով կիրառվել մարդասիրական ականագերծման կոնկրետ պահանջների նկատմամբ:

## Մաքրման պահանջներ

### 1. Ծավալ

Սույն չափորոշիչով սահմանվում է «մաքրում» հասկացությունը և հստակեցվում է որակի համակարգը (օր.՝ կազմակերպումը, ընթացակարգերը և պատասխանատվությունները), որն անհրաժեշտ է ակննազերծող կազմակերպության կողմից ըստ իր պայմանագրային պարտավորությունների հողի մաքրված լինելը որոշելու նպատակով:

### 2. Փաստաթղթեր

Հավելված Ա-ում բերված է նորմատիվ փաստաթղթերի ցանկը: Նորմատիվ հղումները կարևոր փաստաթղթեր են, որոնց հղում է կատարվում սույն չափորոշիչում և որոնք կազմում են սույն Ուղենիշի դրույթների մի մասը:

### 3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ

Հավելված Բ-ում բերված է սույն ուղենիշում կիրառված տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը: ՀԱԳՄՉ-ում կիրառված բոլոր տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը բերված է ՀԱԳՄՉ 04.10-ում:

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքում «պետք է», «հարկավոր է» և «կարող է» բառերն օգտագործված են համապատասխանության նախատեսված մակարդակը ցույց տալու նպատակով: Այդ կիրառումը համապատասխանում է ISO չափորոշիչների և ուղենիշների լեզվի հետ:

ա) «պետք է» կիրառվում է ցույց տալու այն պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները, որոնք պետք է ընդունվեն՝ չափորոշիչն ամբողջությամբ բավարարելու համար.

բ) «հարկավոր է» օգտագործվում է նախընտրելի պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները ցույց տալու համար.

գ) «կարող է» օգտագործվում է գործողության հնարավոր մեթոդը կամ ընթացքը ցույց տալու համար:

«Ակննազերծման գործողությունների ազգային մարմին» (ԱԳԱՄ) տերմինը վերաբերում է ակնններ ունեցող բոլոր այն երկրների պետական վարչություններին, կազմակերպություններին կամ հաստատություններին, որոնք պարտավոր են կարգավորել, կառավարել և համակարգել ակննազերծման գործողությունները: Դեպքերի մեծ մասում Ակննազերծման գործողությունների ազգային կենտրոնը (ԱԳԱԿ) կամ դրան համարժեք հաստատությունը հանդես է գալիս որպես ԱԳԱՄ կամ գործում է նրա անունից: Որոշ իրավիճակներում և որոշակի պահերին ՄԱԿ կամ այլ ճանաչված միջազգային մարմնի համար կարող է անհրաժեշտ և պատշաճ լինել ստանձնել ԱԳԱՄ որոշ կամ բոլոր պարտականությունները և իրականացնել որոշ կամ բոլոր գործառույթները:

«Ակննազերծող կազմակերպություն» տերմինը վերաբերում է ցանկացած կազմակերպությանը (պետություն, ՀԿ կամ առևտրային կազմակերպություն), որը պատասխանատու է ակննազերծման ծրագրեր կամ առաջադրանքներ իրականացնելու համար: Ակննազերծող կազմակերպություններն իրենց մեջ ներառում են գլխամասային գրասենյակներն ու օժանդակ տարրեր և բաղկացած են մեկ կամ ավելի ստորաբաժանումներից:

“Վերահսկող մարմին” տերմինը վերաբերում է ցանկացած կազմակերպությանը, որն ԱԳԱՄ անունից վերահսկում է ականագերծող կազմակերպության և նրա ստորաբաժանումների աշխատանքը:

“Ստուգող մարմին” տերմինը վերաբերում է ցանկացած կազմակերպությանը, որն ԱԳԱՄ անունից իրականացնում է մաքրմանը հաջորդող ՌՎ՝ կիրառելով պատահական փորձարկումների ընթացակարգերը կամ ստուգումների այլ համապատասխան և համաձայնեցված մեթոդներ:

#### 4. Մաքրման հատկորոշում

Հողատարածքը համարվում է “մաքրված”, երբ ականագերծող կազմակերպությունն ապահովում է որոշակի տարածքից և որոշակի խորությունից բոլոր ականների և ՊՊՄ հեռացումը և (կամ) վերացումը:

Մաքրման համար սահմանված տարածքը պետք է որոշվի տեխնիկական հետազոտությամբ կամ այլ վստահելի տեղեկատվության հիման վրա, որը ցույց է տալիս ականների և ՊՊՄ առկայության մակարդակն այդ տարածքում:

Նշում՝ Մաքրման առաջնահերթությունները սահմանվում են առանձին համայնքի վրա ունեցած ազդեցությունը ազգային ենթակառուցվածքի առաջնահերթությունների հետ համեմատելու միջոցով:

Մաքրման սահմանված խորությունը պետք է որոշվի տեխնիկական հետազոտությամբ կամ այլ վստահելի տեղեկատվությամբ, որը ներկայացնում է ականների և ՊՊՄ խորությունը, ինչպես նաև նպատակային հողատարածքի օգտագործման գնահատման հիման վրա: Տեղանքում ականների և ՊՊՄ խորության վերաբերյալ վստահելի տեղեկատվության բացակայության դեպքում ԱԳԱՄ կողմից պետք է սահմանվի մաքրման անհրաժեշտ խորությունը: Մաքրման անհրաժեշտ խորության սահմանումը պետք է հիմնված լինի հնարավոր ականների և ՊՊՄ գնահատման վրա, ինչպես նաև պետք է հաշվի առնի հողատարածքի հետագա օգտագործման նպատակները:

Նշում՝ Թաղված ականների և ՊՊՄ-ների համար այս խորությունը պետք է սովորաբար լինի ոչ պակաս, քան սկզբնական մակերեսից 130 մմ խորությունը: Այս ցուցանիշը հիմնված է մետաղորսիչ սարքերի մեծ մասի համար արդյունավետ հայտնաբերման խորության վրա: Այն կարող է վերանայվել ԱԳԱՄ կողմից՝ կախված ներկայումս օգտագործվող մետաղորսիչ սարքերի տեսակից:

Մաքրման ենթակա տարածքը և մաքրման անհրաժեշտ խորությունը պետք է ԱԳԱՄ կողմից տեղանքի համար հատուկ առաջադրանքում ներկայացվեն ականագերծող կազմակերպությանը: Առաջադրանքը կարող է ներառել նաև՝

- ա) անհրաժեշտ բոլոր այլ գործողությունները, օր.՝ նշագրումը.
- բ) ականագերծման օգտագործվելիք ռեսուրսները.
- գ) առաջադրանքի վրա ականագերծող կազմակերպության աշխատանքի տևողությունը.
- դ) մաքրման որակի ցանկացած այլ պահանջ.
- ե) վերահսկման և ստուգման պահանջները:

Նշված տարածքում սահմանված խորության վրայից բոլոր ականների և ՊՊՄ հեռացումը և (կամ) վերացումը պետք է երաշխավորված լինի՝

- ա) օգտագործելով հավատարմագրված ակնազերծող կազմակերպություններ՝ հավատարմագրված գործառնական հնարավորություններով, ինչպիսիք են ձեռքով մաքրումը, ԱՀՇ թիմերը, մեխանիկական համակարգերը և հասարակության հետ կապերի թիմերը.
- բ) օգտագործելով կառավարման համապատասխան փորձը և կիրառելով ապահով ու արդյունավետ աշխատանքային ընթացակարգեր.
- գ) վերահսկելով ակնազերծող կազմակերպությունը և նրա ստորաբաժանումները.
- դ) անհրաժեշտության դեպքում իրականացնելով մաքրված տարածքի մաքրմանը հաջորդող ստուգման գործընթացը:

Պայմանագրում պետք է հստակեցված լինի մաքրման ենթակա տարածքը, մաքրման խորությունը և վերահսկման ու ստուգման պահանջները: Վերջիններս պետք է ներկայացվեն ԱԳԱՄ կողմից և համաձայնեցվեն պայմանագրի կնքման ընթացքում:

Նշում՝ Մաքրման խորությունների սահմանումը կախված կլինի հողատարածքի հետագա օգտագործման նպատակներից, մաքրման ենթակա տարածքում ականների և ՊՊՄ-ների առկայության հավանականությունից և շրջակա միջավայրի այլ գործոններից: Օրինակ՝

- Ականները և ՊՊՄ-ները կարող են լինել հողի մակերեսին: Այս դեպքում հատկորոշումներում կարող է պահանջվել հեռացնել և (կամ) վերացնել միայն մակերեսային ականները և ՊՊՄ-ները:
- Քաղաքային տարածքներում իրականացվող մաքրումների դեպքում որպես մաքրման գործընթաց կարող է անհրաժեշտ լինել հեռացնել մի քանի մետր որմնաքար:
- Այն դեպքերում, երբ օգտագործվել են խոշոր ռումբեր և արկեր, մաքրման խորությունը կարող է հասնել մի քանի մետրի:
- Անապատային կամ ափամերձ վայրերի ավազաբլուրների դեպքում կարող է պահանջվել 1.0 կամ 2.0 մ խորությամբ մաքրում՝ հայտնաբերելու և վերացնելու համար այնպիսի ականներ, որոնք ի սկզբանե տեղադրվել էին 10 սմ խորության վրա:

Նշում՝ Եթե հողի մակարդակը փոխվել է ականների նախնական տեղադրման պահից հետո, ապա պայմանագրային համաձայնությունները պետք է կազմվեն այնպես, որպեսզի բացառվեն մաքրման անհրաժեշտ խորության հետ կապված հնարավոր թյուրիմացությունները:

Նշում՝ Մաքրման անհրաժեշտ խորությունը պետք է հարմարեցվի մաքրման աշխատանքների առաջընթացին համապատասխան: Ցանկացած փոփոխություն պետք է համաձայնեցվի ԱԳԱՄ և ակնազերծող կազմակերպության միջև, և պետք է պաշտոնապես գրանցվի:

Նշում՝ Հողատարածքի օգտագործման նպատակի փոփոխության դեպքում գործընթացը պետք է կրկնվի:

Նշում՝ Կարող են լինել իրավիճակներ, երբ ակնազերծող կազմակերպությունը ֆինանսավորվում է կոնկրետ տարածքում գործունեություն ծավալելու համար մաքրման իր սեփական առաջադրանքներն սահմանելու իրավունքով՝ ելնելով դոնոր կազմակերպության և (կամ) ԱԳԱՄ կողմից ներկայացված ընդհանուր առաջնահերթություններից: Նման իրավիճակներում ակնազերծող կազմակերպությունը պետք է մաքրումից առաջ պաշտոնապես գրանցի տարածքը և մաքրման նախատեսվող խորությունը:

Նշում՝ Հանրության հետ կապը նպատակ է հետապնդում ապահովել ականագերծման գործողությունների ծրագրերի զգայունությունը և համայնքի կարիքների ու առաջնահերթությունների բավարարումը: Այն պետք է նաև ապահովի, որ ականներ ունեցող համայնքները հասկանան և օժանդակեն ականագերծման գործողություններին:

## 5. Պարտավորություններ

### 5.1. Ականագերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)

ԱԳԱՄ կամ նրա անունից գործող կազմակերպությունը պետք է՝

- ա) պայմանագրերում և համաձայնագրերում հստակեցնի մաքրման ենթակա տարածքը և մաքրման խորությունը.
- բ) հստակեցնի ՈԱ և ՈՎ չափորոշիչներն ու ուղենիշները, որոնք պետք է կիրառվեն մաքրման պայմանագրերի և համաձայնագրերի համար.
- գ) հավատարմագրի ականագերծող կազմակերպությանը՝ որպես մաքրման աշխատանքն իրականացնելու համար պատշաճ կազմակերպություն.
- դ) նախատեսի ականագերծող կազմակերպությունների աշխատանքի վերահսկման համակարգ՝ համաձայն ՀԱԳՄՉ 07.40.
- ե) պահի մաքրված և չմաքրված հողատարածքների գրանցամատյան, որը ցույց կտա վտանգավոր յուրաքանչյուր տարածքի մաքրման կարգավիճակը:

### 5.2. Ականագերծող կազմակերպություններ

Մաքրման աշխատանքներն իրականացնող կազմակերպությունը պետք է՝

- ա) հավատարմագրվի (ԱԳԱՄ կողմից) որպես մաքրող կազմակերպություն՝ գործունեություն ծավալելու նպատակով.
- բ) կիրառի ԱԳԱՄ մաքրման չափորոշիչները: Ազգային չափորոշիչների բացակայության դեպքում մաքրող կազմակերպությունը պետք է կիրառի ՀԱԳՄՉ, կամ պայմանագրում կամ հավաստագրում բերված այլ չափորոշիչները.
- գ) ըստ ԱԳԱՄ կողմից նշված կարգի ունենա մաքրման փաստաթղթերը և ապահովի դրանց մատչելիությունը.
- դ) կիրառի կառավարման պրակտիկաներ և գործունեության ընթացակարգեր, որոնք նպատակ են հետապնդում մաքրել հողատարածքն ըստ պայմանագրում և համաձայնագրերում բերված պահանջների.
- ե) ապահովի ականներ ունեցող համայնքների լիարժեք իրազեկումը տարածքում ականագերծման գործողությունների վերաբերյալ և համայնքի ներգրավվածությունը:

ԱԳԱՄ կամ մարմինների բացակայության դեպքում ականագերծող կազմակերպությունը պետք է ստանձնի լրացուցիչ պարտականություններ: Վերջիններս ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալ պարտականություններով՝

- ա) յուրաքանչյուր վտանգավոր տարածքի համար, նախքան մաքրման ցանկացած աշխատանքների իրականացումը, համաձայնեցնել պահանջը և պաշտոնապես փաստաթղթավորել մաքրման ենթակա տարածքը և նախատեսվող մաքրման խորությունը.
- բ) սահմանել և կիրառել մաքրման գործողությունների վերահսկման համակարգը և մաքրված հողատարածքի մաքրմանը հաջորդող ստուգումները.
- գ) ԱԳԱՄ ստեղծման ընթացքում աջակցություն ցուցաբերել ընդունող երկրին մաքրման որակի ազգային չափորոշիչների նախագծման ուղղությամբ:

### **5.3. Վերահսկող մարմին**

Վերահսկող մարմինը պետք է՝

- ա) հավատարմագրվի (ԱԳԱՄ կողմից) որպես վերահսկող մարմին՝ գործունեություն ծավալելու նպատակով
- բ) վերահսկի ականազերծող կազմակերպությունը և նրա ստորաբաժանումները՝ ըստ ՀԱԳՄՉ 07.40 և ԱԳԱՄ պահանջների.
- գ) ըստ ԱԳԱՄ կողմից նշված կարգի՝ ունենա վերահսկման ստուգումների փաստաթղթերը և ապահովի դրանց մատչելիությունը:

### **5.4. Ստուգող մարմին**

Ստուգող մարմինը պետք է՝

- ա) հավատարմագրվի (ԱԳԱՄ կողմից) որպես ստուգող մարմին՝ գործունեություն ծավալելու նպատակով.
- բ) կիրառի նմուշների ստացման ընթացակարգերն ըստ ՀԱԳՄՉ 09.20 և ԱԳԱՄ պահանջների.
- գ) ըստ ԱԳԱՄ կողմից նշված կարգի՝ ունենա ստուգումների փաստաթղթերը և ապահովի դրանց մատչելիությունը:

**Հավելված Ա  
(Նորմատիվ)  
Փաստաթղթեր**

- ա) ՀԱԳՄՉ 04.10 Ականազերծման գործողությունների տերմիններ, սահմանումներ և հապավումներ;
- բ) ՀԱՄՉ 07.40. Ականազերծման կազմակերպությունների մոնիտորինգ;
- գ) ՀԱԳՄՉ 09.20 Մաքրված հողատարածքի ստուգում՝ նմուշների ստացման ընթացակարգերի կիրառման ուղեցույցներ:

Պետք է օգտագործվի թվարկված փաստաթղթերի վերջին տարբերակը/հրատարակությունը: Այս չափորոշիչում կիրառված բոլոր փաստաթղթերի պատճենները պահպանվում են ՄԱԺՄԿ-ում (Մարդասիրական ականազերծման Ժնհի միջազգային կենտրոն): ՀԱԳՄՉ չափորոշիչների, ուղղորդիչ սկզբունքների և փաստաթղթերի վերջին տարբերակների/թողարկումների գրանցամատյանը պահպանվում է ՄԱԺՄԿ կողմից և տեղակայված է ՀԱԳՄՉ կայքէջում (տես [www.mineactionstandards.org](http://www.mineactionstandards.org)): ԱԳԱՄ-ը, գործատուները և շահագրգիռ այլ մարմինները ու կազմակերպություններ պետք է նախքան ականազերծման ծրագրեր սկսելը ձեռք բերեն դրանց պատճենները:

## Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հապավումներ

### **B.1.**

#### **Մաքրված տարածք**

մաքրված հողատարածք

ականազերծող կազմակերպության կողմից ֆիզիկապես և հետևողականորեն մշակված տարածք՝ որոշակի խորության վրայից բոլոր ականների և ՊՊՄ հեռացումը և (կամ) վերացումն ապահովելու նպատակով:

Նշում՝ Մաքրված տարածքը կարող է ներառել տեխնիկական հետազոտության գործընթացի ընթացքում մաքրված հողատարածքը: Այն կարող է ներառել սահմանային ճանապարհները կամ մաքրված ճանապարհները:

### **B.2.**

#### **Ականազերծող կազմակերպություն**

վերաբերում է ցանկացած կազմակերպությանը (պետական, ՀԿ կամ առևտրային հաստատությանը), որը պատասխանատու է ականազերծման ծրագրեր կամ առաջադրանքներ կատարելու համար: Ականազերծող կազմակերպությունները կարող են լինել հիմնական կապալառուներ, ենթակապալառուներ, խորհրդատուներ կամ գործակալներ:

### **B.3.**

#### **Պատերազմի պայթուցիկ մնացորդներ (ՊՊՄ)**

Չպայթեցված զինամթերք (ՉԶ) և Լքված պայթուցիկ զինամթերք (ԼՊԶ): (ՍՈԶ արձանագրություն V):

### **B.4.**

#### **վտանգ**

վնասի հնարավոր աղբյուր: [ISO Ուղենիշ 51:1999(E)]

### **B.5.**

#### **Ստուգող մարմին**

Կազմակերպություն, որն ԱԳԱՄ անունից իրականացնում է մաքրմանը հաջորդող ՈՎ՝ կիրառելով պատահական ընտրանքի ստացման ընթացակարգերը կամ ստուգման այլ պատշաճ և համաձայնեցված մեթոդներ:

### **B.6.**

#### **Ըստ նպատակի օգտագործում (հողատարածքի)**

Ականազերծման գործողություններից հետո հողատարածքի օգտագործում:

Նշում՝ Ըստ նպատակի օգտագործում՝ արտադրանքի, գործընթացի կամ ծառայության օգտագործում՝ մատակարարի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն: [ISO Ուղենիշ 51:1999(E)]

Նշում՝ Հողի ըստ նպատակի օգտագործումը հարկավոր է ներառել մաքրման առաջադրանքի նկարագրության և մաքրման առաջադրանքի հանձնման փաստաթղթերում:

### **B.7.**

#### **Վերահսկող մարմին**

**կազմակերպություն**, որը հիմնականում հանդիսանում է **ԱԳԱՄ** բաղադրիչ և պատասխանատու է վերահսկման ազգային համակարգի կառավարման և իրականացման համար:

**B.8.**

**Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)**

ականներ ունեցող յուրաքանչյուր երկրի պետական վարչություններ, կազմակերպություններ կամ հաստատություններ, որոնց հանձնարարված է կանոնակարգել, կառավարել և համակարգել ականազերծման գործողությունները:

Նշում՝ Հիմնականում ազգային ԱԳԱԿ կամ նրան հավասարագոր մարմինը գործում է որպես ԱԳԱՄ կամ նրա անունից:

Նշում՝ Որոշ իրավիճակներում և որոշակի պահերին ՄԱԿ կամ այլ ճանաչված միջազգային մարմնի համար կարող է անհրաժեշտ և պատշաճ լինել ստանձնել ԱԳԱՄ որոշ կամ բոլոր պարտականությունները և իրականացնել որոշ կամ բոլոր գործառնությունները:

**B.9.**

**Վստահելի տեղեկություններ (ականազերծման գործողությունների վերաբերյալ)**

ականազերծման գործողություն իրականացնելու համար ԱԳԱՄ կողմից ընդունելի և վստահելի համարվող տեղեկատվություն:

**B.10.**

**Ռիսկ**

վնասի միջադեպ տեղի ունենալու հավանականության և այդ վնասի ծանրության համադրություն [ISO Ուղենիշ 51:1999(E)]:

**B.11.**

**Ապահով**

ռիսկի բացակայություն: Սովորաբար առավել պատշաճ և ընդունելի է ‘տանելի ռիսկ’ տերմինը:

**B.12.**

**Տանելի ռիսկ**

Ռիսկ, որն ընդունելի է տվյալ իրավիճակում՝ ելնելով հասարակության ներկայիս արժեքներից [ISO Ուղենիշ 51:1999(E)]:

## Փոփոխությունների գրանցում

### ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կառավարում

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքը ենթակա է պաշտոնական վերանայման երեք տարին մեկ, սակայն սա չի բացառում այդ երեք տարիների ընթացքում փոփոխությունների կատարումը՝ ելնելով գործառնական անվտանգության և արդյունավետության կամ խմբագրական հանգամանքներից:

Այս ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կատարման դեպքում դրանք համարակալվում են և այդ փոփոխությունների կատարման ամսաթիվն ու ընդհանուր մանրամասները նշվում են ստորև բերված աղյուսակում: Փոփոխությունները նաև պետք է նշվեն ՀԱԳՄՉ-ի առաջին էջում՝ թողարկման ամսաթվի տակ ներառելով «Ներառված են փոփոխություն թիվ 1 և այլն» արտահայտությունը:

Յուրաքանչյուր ՀԱԳՄՉ-ի պաշտոնական վերանայումից հետո կարող են թողարկվել նոր խմբագրությունները: Մինչև նոր հրատարակությունը կատարված փոփոխությունները կընդգրկվեն նոր հրատարակության մեջ և փոփոխությունների աղյուսակը կմաքրվի: Դրանից հետո կրկին կսկսվի փոփոխությունների գրանցումը, մինչև նոր վերանայում իրականացվի: ՀԱԳՄՉ-ի ամենավերջին փոփոխությունները այն տարբերակներն են, որոնք տեղադրվում են ՀԱԳՄՉ-ի կայքէջում՝ [www.mineactionstandards.org](http://www.mineactionstandards.org):

Թիվ	Ամսաթիվ	Փոփոխության մանրամասներ
1	1 դեկտեմբերի 2004թ.	1. Ձևաչափային փոփոխություններ: 2. Տեքստի խմբագրության աննշան փոփոխություններ: 3. Տերմիններում, սահմանումներում և հապավումներում կատարված փոփոխություններն անհրաժեշտ էին սույն ՀԱԳՄՉ համապատասխանությունը ՀԱԳՄՉ 04.10 հետ ապահովելու համար:
2	24 հունվարի 2007թ.	1. Աննշան փոփոխություններ/լրացումներ ներածության առաջին և երկրորդ պարբերություններում: 2. Կետ 4 Մաքրման հատկորոշումից որակի հեռացում: 3. Կետ 4-ում նոր չորրորդ պարբերության ներառում առաջադրանքների վերաբերյալ: 4. Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ) 5.1 կետում “դ” ենթակետի ավելացում: 5. “Ականներ և ՊՊՄ” տերմինի ներառում: 6. “Սպառնալիք” տերմինի հեռացում ՀԱԳՄՉ միջից: